

Միրելի՝ հայրենակիցներ, Մեծամոր համայնքի ավագանու հարգելի գործընկերներ, շնորհավորում եմ տարածքային ինքնակառավարման մարմինների ձևավորման 27-րդ ամյակի կապակցությամբ: Տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ և օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու երաշխավորված իրավունքն ու համայնքի կարողությունն է: Հենց այս հավատամքով ու կառավարման մոդելով արդեն շուրջ երեք տասնամյակ է կառավարվում է Հայաստանի Հանրապետության համայնքները:

Արդեն երկու տարի է ինչ ձևավորվել է Հայաստանի խոշորացված համայնքներից մեկը՝ Մեծամոր համայնքը՝ ընդգրկելով 30 գյուղական և մեկ քաղաքային բնակավայր: Այս տարիների ընթացքում խոշորացման շնորհիվ մենք կարողացել ենք լուծել բազմաթիվ կենսական նշանակության բազմաթիվ առաջնային հարցեր:

Պետություն-համայնք գործակցության շնորհիվ խոշորացված համայնքում իրականացվել են խոշորամասշտաբ ներդրումներ, ինչպես ճանապարհների վերականգման ու վերակառուցման, այնպես էլ ջրագծերի նորացման ու մանկապարտեզների վերականգնման ոլորտներում:

Համայնք-մասնավոր հատված համագործակցության շնորհիվ աճել են ուղիղ ներդրումների քանակը: Խոշորացման երկու տարիների ընթացքում ընդհանուր առմամբ իրականացվել է 2.614.362.065 ՀՀ դրամի ներդրում մեր համայնքում:

Պետք է նշել, որ սա ներկայանալի թիվ է և ուղղված է եղել համայնքային տնտեսությունների ու ենթակառուցվածքների զարգացմանը: Մաղթում եմ, որ այս ամենը շարունակական զարգացման տրամաբանության մեջ լինի ծաղկուն ու բարեկեցիկ:

Ցանկանում եմ, որ մեր համայնքի յուրաքանչյուր բնակիչ իր սեփական ներուժի ներդրումով նպաստի մեր հայրենիքահեն աշխատանքների իրականացմանը: